ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/26

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 05.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26/1043-2021 գրությամբ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրության հիման վրա 27.01.2021թ. թիվ 26/26/1043-2021 գրությամբ նախաձեռնել է «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն 11.02.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2,3 արձանագրության համաձայն՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 16-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, 17.12.2020թ. www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:

Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 25.12.2020թ. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու առաջարկ է ուղարկել «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին՝ կցելով պայմանագրի նախագիծը:

Պայմանագրի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 18.01.2021թ. ներառյալ:

«Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն 15.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և որակավորման ապահովումը սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, որը պատվիրատուն ստացել է 20.01.2021թ.:

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրության համաձայն՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն պայմանագիրը՝ պայմանագրի և որակավորման ապահովման հետ միասին պետք է ներկայացվեր 18.01.2021թ., սակայն ներկայացվել է 20.01.2021թ., ինչը սահմանված ժամկետից դուրս է: Ելնելով վերոգրյալից՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2,3 արձանագրության համաձայն՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 16-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև 17.12.2020թ. www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:

Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 25.12.2020թ. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու առաջարկ է ուղարկել «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին՝ կցելով պայմանագրի նախագիծը:

Պայմանագրի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 18.01.2021թ. ներառյալ:

«Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն 15.01.2021թ., այսինքն սահմանված վերջնաժամկետը՝ 18.01.2021թ., լրանալուց 3 օր առաջ՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և որակավորման ապահովումը սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին /համապատասխան ապացույցը կցվում է/, որը պատվիրատուն ստացել է 20.01.2021թ. (հիմք՝ Պատվիրատուի 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրությունը):

Սակայն, «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն նման փաստական հանգամանքներում «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից: Մասնավորապես, «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրության համաձայն՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն պայմանագիրը՝ պայմանագրի և որակավորման ապահովման հետ միասին պետք է ներկայացվեր 18.01.2021թ., սակայն ներկայացվել է 20.01.2021թ., ինչը սահմանված ժամկետից դուրս է: Ելնելով վերոգրյալից՝ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

Այսպիսով, «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 18.01.2021թ. ներառյալ), այն է՝ 15.01.2021թ. (վերջնաժամկետից երեք օր առաջ)՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ փոստային ծրարը ստացվել է 20.01.2021թ., այսինքն սահմանված ժամկետից ուշ և հաշվի չառնելով այն հանգամանքը, որ այն փոստային առաքումով առաքվել է, ուղարկվել

է ժամկետի մեջ, արձանագրել է, որ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանգիրը կնքելու իրավունքից, քանի որ ստացվել է ժամկետից դուրս:

Հատկանշական է այն փաստը, որ 15.01.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է պատվիրատուին, սակայն պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ … մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 15.01.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը և որակավորման ապահովումը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից հրաժարում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/26 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2020թ. թիվ 01/10-29 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021թ. կարիքների համար կազմակերպվել է «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով դեղորայքի և պատվաստանյութերի գնման ընթացակարգ: Գանահատող հանձնաժողովի թիվ 2.3 արձանագրությամբ՝ 16-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից), 17.12.2020թ. տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետը սահմանվել է 5 օրացուցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 25.12.2020թ.-ին Պատվիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Մասնակցին՝ կցելով պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն է, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Տվյալ դեպքում մինչև 18.01.2021թ. պայմանագիրը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին Մասնակցի կողմից պետք է ներկայացվեր Պատվիրատուին, սակայն ներկայացվել է 20.01.2021թ. ինչը սահմանված ժամանակահատվածից դուրս է:

Ելնելով վերոգրյալից «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն զրկվում է 16-րդ չափաբաժնի մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/26 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/26 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/26 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2020թ. նիստի թիվ 2.3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն և որոշում է կայացվել վերջինիս անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.12.2020թ. tender@mlnpharm.am էլեկտրոնային փոստի միջոցով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Համաձայն «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրության՝ Ընկերությունը 20.01.2021թ. ներկայացրել է պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26/1043-2021 գրությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի 11.02.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,***

չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՈւԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2020թ. նիստի թիվ 2.3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն և որոշում է կայացվել վերջինիս անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 25.12.2020թ. tender@mlnpharm.am էլեկտրոնային փոստի միջոցով «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Համաձայն «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ 01/10-29 գրության՝ Ընկերությունը 20.01.2021թ. ներկայացրել է պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքներին, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընկերությունը 11.02.2021թ. ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 15.01.2021թ. «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը, ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիրը կնքելուց:

Ի հավաստումն վերոգրյալի՝ Ընկերության կողմից ներկայացվել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի կողմից տրված փոստային առաքման անդորրագիրը, համաձայն որի՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված առաքանին, որպես պատվիրված նամակ, հանձնվել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի թիվ 15 փոստային բաժանմունք 15.01.2021թ.:

<u>Միևնույն ժամանակ, Պատվիրատուն ներկայացված գրությամբ հավաստել է, որ Ընկերության կողմից ուղարկված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ստացվել են 20.01.2021թ., սակայն «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ն զրկվել է 16-րդ չափաբաժնի մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից, քանի որ դրանք ներկայացվել է սահմանված ժամանակահատվածից հետո, այն է՝ 18.01.2021թ.:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **<u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Այսպիսով՝ գնահատելով գործում առկա ապացույցները և դրանք համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունն Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 15.01.2021թ., կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին, հանձնել է նախատեսված փաստաթղթերը, որոնք, սակայն, Պատվիրատուի կողմից ստացվել են 20.01.2021թ., ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը՝ որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.01.2021թ. թիվ 26/26/1043-2021 գրությամբ «Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**